## ԳՈՐՏ ԵՒ ԿՈՎ

Գորտ մը տեսաւ կով մեծղի,
Ո՛ն ինչ աղուոր կերևնար.
Ինքն որ ձըլթլոզ, շատ պըզտի,
Հաւկըթի չափ հազիւ կար,
Աչքը տընկեց մեծնալու,
Վերէն վարէն կ'ուռենար
Կովուն կ'ուզէր հասնելու,
Կ'ըռկըռալով անդադար.
Քուրիկ, կըսէր, ինձ նայէ
Թէ սա կովուն չափ եղա՞յ. —
Ոչ, ի՞նչ կըսես՝ ան ո՞ւր է. —
Ոչ մի. Հիմա . . . զայն չանցա՞յ, —
Ո՛հ, շատ հեռու ես. —
Նա քեզ մէյմըն ալ,
Հիմա ի՞նչ կ'ըսես. —
Նու ոչ մօտիկցար:
Անմիտն այնչափ ուժ տըւաւ,
Որ վերջապէս ճաթեցաւ:

Ո՛վ, քանիք կան աշխարհքիս մէջ անհամար
Որ խելքով անմիտ գորտէն վար չեն մընար.
Հասարակ քաղաքացին աչքը մեծի,
Կ'ուզէ իրեն տուն շինել մեծ պարոնի.
Ամէն պըզտի թագաւոր
Ունի իրեն դեսպաններն.
Ամէն իշխան սինլըքոր
Կ'ուզէ զոյգ զոյգ ծառաներ:

ԼԱՖՈՆԴԷՆ

## ՊԱՏԿԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

### Հինգերորդ դար.

### Ե. Պատկեր. ամ տեառն 400–499

| | |
|---|---|
| Եփրեմ խորին ասորի | Կան և այլ ևս ճառք երկբայականք կամ անհարազատք. և այլք ևս որք թէպէտ Մանդակունւոյ իցեն սեպհականեալք, այլ և յանուն Եփրեմի գտանին աւանդեալք: |
| | Եփրեմի վարք ընդարձակ: |
| Գրիգոր Սքանչելագործ. | Ճառք և Ներբողք Թուով Թ: ա. ի Ծնունդն Քրիստոսի: բ. Յաւետիս աստուածածնի: գ. դ. ե. Ներբողք ի Ս. Կոյսն: զ. ի բանն որ յողջոյն Եղիսաբեթի: է. Յաղագս մարմնանալոյ բանին: ը. ի յարութիւն փրկչին: թ. ի Ս. Ստեփաննոս: |
| | Վարք նորա: |
| Գրիգոր Աստուածաբան. | Ա. Ճառք աստուածաբանականք ընդ ամենայն Թուով ԺԵ: |

ա. ի վերայ աստուածաբանութեան: բ. Յաղագս հաւատոյ: գ. դ. ե. Յաղագս Որդւոյ բանք: զ. Յաղագս Սրբոյ Հոգւոյն: է. Յաղագս աստուածաբանութեան: ը. Առ Արիանոս: թ. ժ. ժա. Առ Կլեդոնիոս: ժբ. Յաղագս բարեկարգութեան ի խօսս: ժգ. ժդ. ժե. Խաղաղական միաբանութիւն միայնացելոց յետ լռութեան*: — Բ. Այլ ճառք և ներբողք թուով ԺԴ: ա. ի ծնունդն Քրիստոսի: բ. ի յայտնութիւն տեառնն: գ. ի մկրտութիւն տեառնն: դ. ի պասքա և ի հեղգութիւն. ե. ի սուրբ պասքա: զ. ի Նոր կիւրակէն, և ի յիշատակ Սրբոյ վկային Մամասայ: է. ի պէնտէկոստէն և ի Ս. Հոգին: ը. ի Ժողովողն: թ. Առ Հայրն իւր լռեալ և զգացեալ: ժ. Յաղագս աղքատսիրութեան: ժա. ի Կիպրիանոս եպիսկոպոս և ի վկայ: ժբ. ի մակաբայեցիսն: ժգ. ի Ս. Խաչն աստուածընկալ: ժդ. ի Ս. Մելիտոս անտիոքայ հայրապետ: — Եւ այլ չորս հատուածք ճառից:

Վարք նորա ընդարձակ:

Մեծն Բարսեղ կեսարացի.

Ա. Ճառք թուով ԼԳ: ա. Յաղագս պահոց: բ. ի բուն բարեկենդանն: գ. Զարբեցողաց: դ. ի Հայեաց ի քեզ: ե. Յաղագս ապաշխարութեան: զ. ի բանն՝ Քակեցից զշտեմարանս իմ: է. Առ ընչեղս: ը. Զվաշխողաց: թ. Զբարկացողաց: ժ. Զմախանաց: ժա. Ճառք չորք յայլ և այլ Սաղմոսս: ժզ. Յաղագս Երրորդութեան: ժէ. Իսկզբանէ էր բանն: ժը. ի ծնունդ փրկչին: ժթ. Տրամախօսութիւն ընդ Ապոլինարի յաղագս մարմնաւորութեան փրկչին: ի. Տրամախօսութիւն ընդ երանելւոյն Գրիգորի յաղագս հաւատոյ: իա. Ողոմնեայ եպիսկոպոսի Բարսիլիոս եպիսկոպոս: իբ. Բարսիլիոս եպիսկոպոս Եւսեբոս եպիսկոպոսի: իգ. Թուղթ առ Գրիգոր աստուածաբան յաղագս վարուց: իդ. Թուղթ առ նոյն յաղագս կրօնաւորական վարուց: իե. Թուղթ առ Գէորգոր երէց անտիոքացի: իզ. Յաղագս գոհութեան: իէ. ի վկայն Յուղիտա: իը. ի Ս. Ստեփաննոս: իթ. ի քառասուն վկայսն: լ. ի Գորդիոս վկայն: լա. Յորդորակ ի մկրտութիւն: լբ. Թէ չէ պատճառ չարեաց Աստուած: լգ. Յաղագս ողորմութեան և աղօթից: — Բ. Յաղագս Վեցօրէից, կամ Գիրք Վեցօրեայ արարչութեան յինն ճառս բաժանեալ*: — Գ. Ճառ ի տօնի Տեառնընդառաջին: — Դ. Քարոզ զատկաց: — Ե. Թուղթ առ Տերենտիոս ստրատելատ վասն մահու դըստերայն: — Զ. Վասն ապաշխարութեան: — Է. Վասն պահոց: — Ը. Խրատք: — Թ. Հարցողաց գիրք: — Ժ. Աղօթք այլ և այլ: — ԺԱ. Պատարագամատոյց յանուն Բարսղի: — Բարսղի վկայաբանութիւն հանդերձ այլ և այլ սքանչելեօք, գրեալ յՀելատիոսէ արքեպիսկոպոսէ Կեսարիոյ:

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ